ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

«Պաշտօն ծայրագոյն վարդապետաց է՝ ունելով զուսումն վարդապետութեան և զգիտութիւն Հին և Նոր Աստուածային Կտակարանաց, և զդաւանութիւն խոստովանութեան ուղղափառ հաւատոյ ի սուրբ Երրորդութեանն և ի մարդեղութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ առնել զբեմբասուցութիւնս և ծագէ ի ծագ անխափան քարոզել»:

(ՄՍՇՏՈՑ ՋԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ)

Սույն թվականի հոկտեմբերի 31-ին, ժամը 11-ին, Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Տորոնտոյի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Հովնան վրդ. Տերտերյանի նայրագույն վարդապետական թեզի բանավոր պաշտպանությունը:

Հանդիսությունը նախագահում էր Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սիոն արքեպս. Մանուկյանը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և հյուրեր:

Տ. Հովնան վրդ. Տերտերյանը իր ծայրագույն վարդապետական թեզը նախօրոք ներկայացրել էր Վեհափառ Հայրապետին: Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ կազմվել էր քննիչ հանձնախումբ՝ հետևյալ անդամներով. հոգևոր ճեմարանի տեսուչ գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արարաջյան (նախագահ), Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար, հոգևոր ճեմարանի վաստակաշատ դասախոս պրոֆ. Պարգև Ծահբազյան և բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ պրոֆ. Պետրոս Բեդիրյան:

Տ. Հովնան վրդ. Տերտերյանի ծայրագույն վարդապետական թեզի թեման էր՝ «Հոգևորականի կոչումը», բաղկացած 86 էջից և ունի հետևյալ գլխաբաժանումները.

1. Հոգևորականի կոչումը:
2. Հոգևորականը ծուխին մէջ:
3. Հայ երիտասարդը՝ վաղուան եկեղեցին:
4. Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին և հայ հոգևորականը:

Նախ քննիչ հանձնախումբը ներկա-



Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու առջև

յայտնեց իր կազմած կարծիքը, ապա իր թեզի բանավոր պաշտպանությամբ հանդես եկավ հոգեշնորհ հայր սուրբը:

Հանդիսության վերջում գերաշնորհ Տ. Սիոն սրբազ. Մանուկյանը, բարձր գնահատելով կատարված աշխատանքը, շնորհավորեց հոգեշնորհ հայր սուրբին և քաջալերիչ խոսք ասաց նրան՝ իր ապագա հովվական ու ազգային գործունեության ասպարեզում:

Հավարտ հանդիսության քննիչ հանձնաժողովի անդամները և Տ. Հովնան վրդ. Տերտերյանը առաջնորդվեցին Վեհարան, որտեղ Նորին Սրբությունը շնորհավորեց Տ. Հովնան վարդապետին, իր գոհունակությունը հայտնեց կատարված աշխատանքի համար և տվեց իր օրհնությունը:

Հաջորդ օրը, նոյեմբերի 1-ին, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի ունեցավ Տ. Հովնան վրդ. Տերտերյանի ծայրագույն վարդապետական աստիճանի տվչության արարողությունը՝ ըստ Ջեռնադրության Մաշտոցի: Ծայրագույն վարդապետական աստիճանի տվչության արարողությունը կատարեց գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաբաջյանը:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի և Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հոգևորականությունը, Մայր Աթոռի սարկավագաց դասը, բազմաթիվ հավատացյալներ:

Հավարտ արարողության սրբազան հայրը և ներկաները շնորհավորեցին նորընծա հայր սուրբին՝ իրենց հոգեկան ուրախությունն արտահայտելով ա.դ ատրթիվ, և մաղթեցին Աստուծո շնորհները և անձնուրաց նվիրում հայ ժողովրդին և Հայ Եկեղեցուն:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է Հայ Եկեղեցու նվիրյալ սպասավորին ծայրագույն վարդապետական բարձր աստիճանին արժանանալու համար և մաղթում նոր եռանդ ու նորանոր հաջողություններ՝ ի մխիթարություն աշխարհասփյուռ հայ ժողովրդի ու Հայ Առաքելական Եկեղեցու: